Մամուլի հաղորդագրություն

Շնորհավորելով Գործարար խորհրդատուների օրը՝ հայտարարվում է Հայաստանում խորհրդատվական ոլորտի հեղինակավոր միջազգային CMC համաժողովի և «Կոնստանտինոս» մրցանակաբաշխության մասին

6* հունիսի, *2024

Հունիսի 6-ին ողջ աշխարհում նշվում է խորհրդատուների միջազգային օրը, և մենք ուրախ ենք հայտնել Հայաստանում անցկացվելիք խորհրդատուների միջազգային CMC համաժողովի և տարեկան հավաքի մասին, որը տեղի կունենա 2024 թվականի **հոկտեմբերի 7-11**: Այս հեղինակավոր միջոցառումը, որը կազմակերպվում է Կառավարման խորհրդատվության Հայաստանի ինստիտուտի (IMC Հայաստան) կողմից, խոստանում է անկյունաքարային լինել համաշխարհային խորհրդատվական և գործարար համայնքի համար:

Խորհրդատուների միջազգային օրը, որն առաջին անգամ նշվել է 2005 թվականին, նպատակ ունի ընդգծելու կառավարման խորհրդատուների անգնահատելի ներդրումն ամբողջ աշխարհում: Խորհրդատուների միջազգային օրն այս տարի անցկացվում է «Միտումները վերածելով բիզնեսի» թեմայով՝ կարևորելով խորհրդատուների առանցքային դերը զարգացող բիզնես էկոհամակարգի ձևավորման և զարգացման գործում:

Կառավարման խորհրդատուները կարևոր դեր ունեն բիզնեսի համար՝ իրենց անգնահատելի փորձով աջակցելով վերջիններիս արդյունավետության, ռազմավարության և կառավարման բարելավմանը, միջազգային դերի մեծացմանը:

Ոլորտի հիմնական միտումները ներառում են թվային փոխակերպումը, տվյալների վերլուծությունը, կայունությանն ուղղված գործողությունների պլանը, հեռահար և հիբրիդային աշխատանքային մոդելների շեշտադրումը, քանի որ արագ փոփոխվող համաշխարհային շուկայում մրցունակ լինելու համար ընկերությունները մշտապես փնտրում են նորարար լուծումներ և խորհրդատուներ, ովքեր կկարողանան օգնել այդ գործընթացներում:

Միջազգային CMC համաժողովը կառավարման խորհրդատուների ամենամյա հավաք է, որը խթանում է միջազգային խորհրդատուների միջև գիտելիքների փոխանակմանը, մասնագիտական ցանցի ընդլայնմանը և մասնագիտական աճի միջավայրի ստեղծմանը: Այս տարվա համաժողովը կենտրոնանալու է հետևյալ թեմաների շուրջ՝ խորհրդատվություն, թվայնացում, շրջակա միջավայր-կայունություն, բիզնես միջավայր և ներկայանալու է «Թվային հորիզոններ. Միավորելով նորարարությունները կայուն ապագայի համար» խորագրի ներքո:

Միջազգային CMC համաժողով 2024

CMC համաժողովը մասնակիցներին առաջարկելու է հարուստ օրակարգ՝ վարպետության դասեր, սեմինարներ և փոխգործակցության հնարավորություններ, որոնք կենտրոնացած են «Թվային հորիզոններ. Միավորելով նորարարությունները կայուն ապագայի համար» թեմայի

շուրջ:

Օրակարգը ներառելու է բացման միջոցառում, միջազգային CMC համաժողով, հեղինակավոր «Կոնստանտինոս» միջազգային մրցանակաբաշխություն (որը համարվում է խորհրդատվական ոլորտի «Օսկար»), գալա ընթրիք, պատվիրակների և հյուրերի համար միջոցառումներ:

Միջազգային CMC ամենամյա համաժողովը կառավարման խորհրդատուների ոլորտի առաջնակարգ միջոցառում է: Այս համաժողովի միջոցով Կառավարման խորհրդատվական ինստիտուտների միջազգային խորհուրդը (ICMCI-International Council of Management Consulting Institutes), նպատակ ունի կապ հաստատելու տարածաշրջանի և այլ երկրների խորհրդատուների հետ՝ փոխանակելու առաջատար խորհրդատվական փորձառություններն ու հայեցակարգերը:

Համաժողովին մասնակցելու են կառավարման խորհրդատուներ ամենատարբեր ոլորտներից՝ փորձառու մասնագետների կողքին հանդես կգան նաև նորեկներ, ոլորտով հետաքրքրված ուսանողներ, մասնագիտական զարգացումը կարևորող անհատ խորհրդատուներ, խորհրդատվական կորպորատիվներ և ղեկավարներ: Միջոցառման օրակարգում նախանշված են տարատեսակ համընթաց հանդիպումներ, որոնք կանցկացվեն ոլորտի առաջատար մասնագետների և խորհրդատուների կողմից:

Միջազգային CMC 2024 համաժողովի տոմսերի վաղ վաճաքը հասանելի է մինչև 2024-ի հուլիսի 30-ն այս հղումով՝ https://icmci2024armenia.org/registration/

Համաժողովի մասին լրացուցիչ մանրամասները կներկայացվեն շուտով, ներառյալ հանդիպումների օրակարգը, վարպետության դասերը, խոսնակների անունները և մրցանակաբաշխության մասին այլ մանրամասներ:

CMC 2024 համաժողովի բրենդինգը հատուկ է մշակված՝ արտացոլելու Հայաստանի՝ որպես համաժողովի հյուրընկալող երկրի ինքնությունը և միջոցառման թեման՝ «Թվային հորիզոններ. Միավորելով նորարարությունները կայուն ապագայի համար»: Բրենդինգը կառուցված է հատուկ գույների և խորհրդանիշների շուրջ, որոնք փոխանցում են համաժողովի հիմնական արժեքներն ու առանցքային ոլորտների մասին տեղեկատվություն:

- **Վարդակարմիրի երանգը**. այս գույնը նռան խորհրդանշական գույնն է, որը Հայաստանի խորհրդանիշն է՝ արտահայտելով առատություն և բարգավաճում: Վարդագույն կարմիրի ընտրությունը բրենդինգը կապում է Հայաստանի հարուստ մշակութային ժառանգության հետ:
- **Մուգ կապույտի երանգը**. այս գույնը խորհրդանշում է թվայնացումը, որը համաժողովի առանցքային ոլորտներից մեկն է: Սև մարգարիտը ներկայացնում է թվային փոխակերպման առաջադեմ, բարձր տեխնոլոգիական ոլորտները, որոնք էլ համաժողովը նպատակադրված է ուսումնասիրել:
- **Կանաչի երանգը**. արտացոլելով կայունությունը և շրջակա միջավայրի միտումները՝ որսորդական կանաչը համաժողովի քննարկումների միավորող թեմայի խորհրդանիշն է՝ կայուն բիզնես հնարավորություններ և ավելի կանաչ ապագայի ու նորարարություններ ստեղծելու համար:

Համաժողովի բրենդինգում պատկերված մատնահետքը խորհրդանշում է համաժողովի ազդեցությունը, որը ներկայացնում է այն եզակի և մնայուն «հետքը», որը միջոցառումը նպատակ ունի թողնել թվային փոխակերպման և կայունության ոլորտներում: Մատնահետքը խորհրդանշում է աշխարհում անհատական և առանձնահատուկ հետք թողնելու գաղափարը՝ համաժողովի նպատակին համահունչ՝ կամրջել նորարարությունները կայուն ապագայի համար:

Ավելին իմանալու համար խնդրում ենք այցելել համաժողովի կայքէջ՝ www.icmci2024armenia.org

Միջազգային *CMC 2024* համաժողով / հաղորդակցության պատասխանատու
Սիրանուշ Գյուրջինյան
+37494354734

***

***IMC* Հայաստանի մասին**. Կառավարման խորհրդատվության Հայաստանի Ինստիտուտը *(IMC* Հայաստան*)* հիմնադրվել է *2011*-ի դեկտեմբերին՝ նպատակ ունենալով հայ խորհրդատուների կարողությունները հասցնել միջազգային չափանիշներին: Աջակցություն ստանալով *EBRD BAS* Հայաստանի կողմից՝ *IMC* Հայաստանը կենտրոնացած է Հայաստանում բիզնեսի զարգացման ծառայությունների շուկայի բարելավմանը՝ հիմնվելով լավագույն փորձի վրա:
IMC Հայաստանը խթանում է կառավարման խորհրդատվության գերազանցությունը և էթիկան՝ միջազգային սերտիֆիկացման, մասնագիտական զարգացման և ցանցային կապերի միջոցով: Այն ձգտում է անդամակցել Կառավարման խորհրդատվական ինստիտուտների միջազգային խորհրդին *(ICMCI)*՝ առաջարկելու հեղինակավոր Հավատարմագրված կառավարման խորհրդատուի *(CMC)* հավատարմագրում:

Կայք: *https://imc-armenia.org/ Facebook: https://www.facebook.com/imc.armenia/*